ՀՀ ԿԳՄՍՆ

<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ Հայաստանի առաջին հանրապետության ներքին դրությունը

Մասնակցի անուն, ազգանունը՝Ժուլիետա Մարտիրոսյան

Դպրոցը՝ Ավշարի միջն. դպրոց

Դասավանդած առարկան՝ Պատմություն

Ք. Արարատ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Հայաստանի առաջին հանրապետության ներքինդրությունը……..4

Եզրակացություն……14

Թեմայի դասավանդման մեթոդիկա……15

Գրականության ցանկ……17

Ներածություն

Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի ամենաուսանելի էջերից է Հայաստանի առաջին հանրապետության պատմությունը:

Կարծում եմ՝ այս թեման ունի չափազանց կարևոր արդիական քաղաքական նշանակություն: Ցանկանում եմ Հայաստանի առաջին հանրապետության պատմական փորձով աշակերտներին սովորեցնել դասեր քաղել պատմությունից և դրանց կիրառմամբ ակտիվ մասնակցություն ունենալ մեր անկախ պետականության կայացման գործին:

Հստակ փաստերով անհրաժեշտ է սովորողներին ներկայացնել, որ անկախ պետականության համար հայ ժողովուրդը պարտական է ոչ թե որևէ պետության բարեհոգությանը, այլ իր հերոսական պայքարին Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում: Այս հերոսամարտերով հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև արժանիորեն վաստակեց իր անկախ լինելու իրավունքը:

Սովարողների ուշադրությունը պետք է հրավիրել այն փաստի վրա, որ, չնայած ներքին և արտաքին դժվարություններին, սկիզբ դրվեց պետական շինարարությանը, զարկ տրվեց գիտությանն ու կրթությանը, բացվեցին բազմաթիվ դպրոցներ, հիմնադրվեց պետական համալսարանը: Երկրում ստեղծվեց բազմակուսակցական ժողովրդավարական կառավարման համակարգ, հաստատվեցին քաղաքացիական ազատություններ, հավասար ընտրական իրավունքներ, այդ թվում՝ կանանց: Հաստատվեցին արտաքին կապեր, մի շարք երկրներում նշանակվեցին Հայաստանի դեսպաններ և ներկայացուցիչներ:

Մերօրյա դեպքերն ու իրադարձությունները գալիս են հաստատելու, որ պատմությունը կրնվում է՝ հայ ժողովուրդը կրկին գործ ունի նույն թշնամիների, հակառակորդների ու <<բարեկամների>> հետ, դարձյալ մեր առջև ծառացել են տնտեսական, քաղաքական, անվտանգային դժվարություններ, մենք ունենք ներքին խիստ հակասություններ: Կարելի է ասել փոխվել են միայն ժամանակներն ու գործող անձիք:

Կարևոր եմ համարում, սովորողներին ցույց տալ առաջին հանրապետության տարիներին և մեր օրերում տեղի ունեցող իրադարձությունների նմանություններն ու տարբերությունները: Անհրաժեշտ է նրանց մոտ ձևավորել այն տեսակետը, որ մեր ժողովրդի ապահով, անվտանգ ու բարեկեցիկ ապագայի երաշխիքը պետք է լինի Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանի առաջին հանրապետության ներքին դրությունը

Հայաստանի Հանրապետության հռչակումը: 1918թ.մայիսի 26-ին Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասյան սեյմի վերջին նիստը, որն ընդունեց բանաձև իր լիազորությունները չեղյալ հայտարարելու մասին:

1918թ. մայսիսի 26-ի կեսօրին Սեյմը ցրվեց: Մի քանի ժամ անց նույն դահլիճում գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը, որը հռչակեց Վրաստանի անկախությունը: Մայիսի 27-ին էլ Ադրբեջանի ազգային խորհուրդը հայտարարեց Ադրբեջանի անկախությունը:

1918թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհրդի որոշմամբ Բաթում ուղարկվեց հայկական պատվիրակությունը (Ալեքսանդր Խատիսյան, Միքայել Պապաջանյան, Հովհաննես Քաջազնունի), որին տրվեց անկախ Հայաստանի անունից թուրքերի հետ բանակցելու և հաշտություն կնքելու բացարձակ լիազորություն: Իսկ Հայաստանի անկախության հայտարարությունը, ինչպես Սիմոն Վրացյանն է նշում եղավ ավելի ուշ՝ մայիսի 30-ին:

1918թ.մայիսի 30-ին Հայոց Ազգային խորհուրդը հրապարակեց հետևյալ հայտարարությունը:

«Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար:

1918 թ. մայիսի 30, Հայոց Ազգային խորհուրդ, Թիֆլիս»:[1]

Ինչպես գտնում է Ս.Վրացյանը, Հայաստանի անկախության հայտարարության օրը պետք է համարվի մայիսի 30-ը, սակայն համարվում է մայիսի 28-ը, այսինքն այն օրը, երբ Ազային խորհուրդը որոշեց հայկական պատվիրակություն ուղարկել Բաթում, իսկ հաշտության բանակցություններ վարելու թուրքերի նախապայմանն անկախության հայտարաությունն էր, ուստի այդ օրն էլ կարելի է համարել անկախության սկզբնավորության օր:

[1]Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու,Երևան, 2000, էջ 18:

Այսպես թե այնպես Հայաստանի Հանրապետության ծագման օրը եղավ մայիսի 28-ը:

Այդ օրը դարձավ նվիրական հայ ժողովրդի համար և մտավ ազգային տոնացույցի մեջ, իբրև սրբազան օրերից մեկը[2]:

Այսպիսով 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի մի փոքրիկ հատվածում վերականգնվեց շուրջ 600 տարի առաջ կորցված հայկական պետականությունը:

Ամեն կողմից Հայրենիք շտապեցին կարող ուժեր՝ իրենց ծառայությունը մատուցելու նորանկախ պետությանը:

Սոցիալ-տնտեսական դրությունը: Նորահռչակ Հայաստանի ներքին ահավոր կացության մասին շատ նկարագրություններ կան: Երկրում տիրող իրավիճակը Հ. Քաջազնունին իր ելույթում համեմատում է «անձև քաոսի և ավերակների կույտի»:

Հանդիպում է նաև նման նկարագրություն. «Ամառվա օդը ծանրացած էր մահվան թանձր ստվերներով: Հիմանդ ու քաղցած մարդիկ ուրվականների պես երերում էին ցեխոտ խրճիթների խորշերում ու կեղտի մեջ... Տեղացիները և գաղթականները սնվում էին մի բուռ ցորենի հատիկներով և խոտերի ու բույսերի ապուրով. բայց ձմռան վրա հասնելով նույնիսկ դրանք էլ անհետացան>>[3]:

Հայաստանի Հանրապետությունը գորությունը սկսեց սոցիալ-տնտեսական աննպաստ պայմաններում: Պատերազմի, Անդրկովկասի տրոհման և ավանդական կապերի խախտման հետևանքով երկիրը լիովին քայքայված վիճակում էր: Չէին գործում ձեռնարկություններն ու հանքերը: Առաջացել էր առաջին անհրաժեշտության ապրանքների սով և գների մեծ աճ: Քայքայված, թալանված, բազմազան գաղթականներով և որբերով ծանրաբեռնված երկիրը կարող էր հաղթահարել սովի սպառնալիքը միայն դրսից արդյունավետ օժանդակություն ստանալու դեպքում: Մինչդեռ երկիրը շրջապատված էր թշնամիներով, և փակ էին բոլոր ճանապարհները:

Ամբողջ երկրում շուրջ 450.000 գաղթական կար, որից մոտ 40.000-ը՝ Երևանում, շատերը փողոցների և ավերակ շենքերի մեջ:

1918թ. հոկտեմբերին սպառվեցին հանրապետության հացի պաշարները, և սկսվեց սովը, որին ուղեկից դարձան խոլերան, ապա՝ բծավոր տիֆը: Վեց ամսվա ընթացքում սովից ու

[2] Վրացյան Ս.,Հայաստանի հանրապետության, Երևան,1993,էջ 162:
[3] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Առաջին տարիներ, Երևան, 2005, էջ 44:

հիմանդություններից մահացավ 180 հազար մարդ: Բծավոր տիֆին զոհ գնաց նաև Արամ Մանուկյանը (1919 թ. հունվարի 29):

Տնտեսության վերականգնմանն ուղղված առաջին միջոցառումները: Կառավարությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ երկիրը այս վիճակից հանելու համար: 1918 թ. օգոստոսին Հայաստանը հայտարարվեց խոլերիայով վտանգված երկիր: 1918 թ. սեպտեմբերին սահմանվեց բամբակի առևտրի պետական մենաշնորհ, որն այդ օրերին պետության եկամուտի միակ իրական աղբյուրն էր: Կառավարության հսկողության տակ դրվեց հացի բաշխումը, և մցվեց հացաբաժնի նոր միավորում: Ստեղծվեցին սննդատու կայաններ, որտեղ տաք կերակուր էր բաժանվում:

1919 թ. հունվարին կառավարությունը և Հայաստանի խորհուրդը որոշեցին դիմել դաշնակից պետություններին և հատկապես ԱՄՆ-ին: Այդ նպատակով վարչապետ Հ. Քաջազնունին մեկնեց Եվրոպա և ԱՄՆ-ը: 1919 թ. մայիսին տեղ հասավ երկար սպասված ամերիկյան օգնության առաջին խմբաքանակը: Գնալով օգնության ծավալները մեծացան, որը թույլ տվեց մեղմել սովը և փրկել հազարավոր կյանքեր: Միայն 1919 թ. ԱՄՆ-ից ստացվեց մոտ 1,3 մլն փութ ալյուր, 260 հազար փութ ցորեն, 70 հազար փութ բրինձ, 6 մլն տուփ խտացրած կաթ, 44 հազար փութ շաքար և այլն:

Միջոցառումներ ձեռնարկվեցին որբերի և շուրջ 300 հազար գաղթականների կարիքները հոգալու համար: 1918 թ. սեպտեմբերին օրենք ընդունվեց գաղթականներին հողով կամ աշխատանքով ապահովելու կամ պետական նպաստ տրամադրելու մասին: Իսկ հոկտեմբերի 11-ի օրենքով պետությունն իր վրա վերցրեց գաղթական որբերի խնամատարության ու դաստիարակության գործը: 1919 թ. մարտին ամերիկյան Նպաստամատույց կոմիտեին հանձնվեց 15 հազար որբերի խնամք:

Աշխատանքներ տարվեցի գյուղատնտեսության վերականգնման համար: 1920 թ. հունվարի 27-ին ստեղծվեց Սերմագնման հատուկ կոմիտե, որը եռանդուն գործի անցավ և ամբարեց 375 հազա փութ սերմնացու: Մինչև մայիսի սկիզբը կառավարությունը ժողովրդին բաժանեց մոտ 330 հազար փութ սերմնացու:

1920թ. մարտի 1-ին Խորհրդարանը մեկ միլիոն ռուբլու վարկ բացեց՝ գյուղատնտեսական գործիքներ գնելու համար:

Աշխատանքներ տարվեցին նաև ոռոգման խնդիրների լուծման համար:

Արմատական լուծում էր պահանջում հողային հարցը: Կառավարությունը 1919 թ. օգոստոսին հողային հարցում գլխավոր խնդիր հռչակեց բոլոր հողերի ազգայնացումը և դրանց բաշխումը սակավահող գյուղացիներին: 1920թ. հուլիսի 4-ին օրենք ընդունվեց «Հողային հատուկ մարմինների մասին»:

Շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար առանձնահատուկ նշանակություն ուներ հաղորդակցության ուղիների բարեկարգումը: 1920թ. հաջողվեց ամենօրյա երկաթուղային կապ ապահովել Թիֆլիսի հետ: Կատարվեցին խճուղիների բարեկարգման և նոր ճանապարհների կառուցապատման որոշ աշխատանքներ:

Քայլեր ձեռնարկվեցին արտադրության ոլորտի վերականգնման ուղղությամբ: Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Էջմիածնում, Դիլիջանում և այլ բնակավայրերում կազմակերպվեցին ջուլիականոցներ, կաշվի մշակման կետեր, կոշկակարանոցներ, կարուձևի ու փայտամշակման արհեստանոցներ և այլն: Սրա հետևանքով աշխատանքով ապահովվեցին հազարավոր մարդիկ:

1920թ. ամռանն ընդունվեց հանքերի մասին օրենք, որով հանրապետության հանքային հարստությունները համարվեցին պետական սեփականությունը: Պետությունն իր ձեռքը վերցրեց Կողբի և Կաղզվանի աղահանքերի և Օլթիի ածխահանքերի շահագործումը:

1919թ. ստեղծվեց Հայկոոպը, 1920թ. այն միավորում էր 350 կոոպերատիվ՝ 95 հազար անդամով:

Տնտեսության վերականգնման, երկրին անհրաժեշտ ապրանքներով ապահովելու, դրամաշրջանառության կարգավորման և տարադրամ ձեռք բելեու գործին մեծապես կարող էր ծառայել 20 մլն դոլարի չափով «Անկախության փոխառության» իրացումը, որի մասին օրինագիծ ընդունվեց 1920 թ. հանիսին:

Հայ և օտարերկրյա կապիտալի որոշ ներկայացուցիչներ հանդես եկան հանրապետության տնտեսության մեջ ներդրումներ կատարելու հեռանկարային առաջարկություններով:

Հայկական պետականության կայացմանը նպաստելու նպատակով մի շարք մեծահարուստ հայեր խոշոր միջոցներ կտակեցին Հայաստանին[4]:

[4] Հայոց պատմություն, բուհական դասագիրք, Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ, Երևան, 2012, էջ 535-542:

Ընթանում էին նաև ներքին կազմակերպական և շինարարական աշխատանքներ: 1920թ. ամռանը Հայաստանի Հանրապետությունը բաժանվում էր 4 նահանգապետությունների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի, Սյունիքի:

1920 թ. հուլիսին հաստատվեց Հայաստանի քաղաքացիության մաին օրենքը, ըստ որի՝ ՀՀ քաղաքացի էր ճանաչվում յուրաքանչյուր նախկին ռուսահպատակ կան թուրքահպատակ, որը տվյալ պահին ապրում էր ՀՀ սահմաններում:

Կրթամշակութային ձեռնարկումները: Չնայած սուղ հնարավորություններին լուրջ միջոցառումներ ձեռնարկվեցին կրթական գործի և մշակութային կյանքի զարգացման ուղղությամբ:

1919թ. մայիսի 30-ին կառավարությունը որոշեց 15-օրյա ժամկետում դատարկել բոլոր դպրոցական շենքերը, նորոգել դրանք և նախապատրաստել նոր ուսումնական տարվա համար: Այդ նպատակին հատկացվեց շուրջ 11 մլն ռուբլի: Արդեն տարվա վերջին հանրապետությունում կար 431 տարրական դպրոց, որոնցում սովորում էին ավելի քան 38 հազար աշակերտներ, և աշխատում էին շուրջ 1100 ուսուցիչներ: Միջնակարգ դպրոցների թիվը քիչ էր՝ ընդամենը 20 դպրոց՝ 5162 աշակերտներով և 288 ուսուցիչներով:

1919թ. մայիսի 16-ին կառավարությունը որոշում ընդունեց համալսարան բացելու մասին:Հուլիսի 15-ին բացվեց հուշարձանների պահպանման և արվեստի հովանավորության բաժինները:

Մայիսի 25-ին երևանում բացվեց Հայ արվեստագետների միության կազմակերպած անդրանիկ նկարչական ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված էին Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյաի և այլոց նկարներ:

Կառավարությունը Հայ գրողների միության քարտուղար Հովհաննես Թումանյանի դիմումի համաձայն հուլիսի 9-ին 100 հազար ռուբլի հատկացրեց որպես նպաստ հայ գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին տալու համար:

Սեպտեմբերի 10-ին Խորհրդարանը որոշեց հիմնել Ազգագրական-Մարդաբանական թանգարան-գրադարան: Հիմնումից հետո նրան հանձնվեց Հայոց ազգագրական ընկերության ամբողջ շարժական և անշարժ գույքը՝ մոտ 10 հազար գիրք, պարբերական, 120 ձեռագրեր, ազգագրական նյութեր: Ընկերության հիմնադիր և վարիչ, հայ նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը նույն պաշտոնով տեղափոխվեց Հայաստան:

1919թ. վերջին Երևանում արդեն գործում էին թատերական վարժարանը, երաժշտական, հայոց լեզվի, մանկավարժական դասընթացներ:

Ինչպես գրում է Ս. Վրացյանը տարեվերջին արդեն երկիրը գտնվում էր համեմատական բարեկարգության մեջ: Հայաստանը դարձել էր այն հուսատու փարոսը, որը իրեն էր քաշում աշխարհի չորս կողմում սփռված հայությանը[5]:

1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը: Հունիսի 21-ին կառավարությունը որշեց այն փոխադրել Երևան և նրան հատկացնել նախկին Ուսուցչական սեմինարիայի շենքը (ներկային ԵՊՀ պատմության և աստվածաբանության ֆակուլտետների մասնաշենքը):

Խորհրդարանը մի շարք օրենքներ մշակեց հանրային կրթության ասպարեզում: 1920թ. մարտին հաստատվեց դպրոցական հանձնախմբի օրնագիծը եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման և պետականացման մասին:

Չնայած հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր դրությանը՝ կարճ ժամանակում հնարավոր եղավ դնել տնտեսության հիմքերը, տեղաշարժեր արձանագրել կրթամշակութային ոլորտում:

Քաղաքական կյանքը, կուսակցությունները: Հայկական պետությունն ի սկզբանե որդեգրեց ժողովրդավարություն՝ լայն ասպարեզ բացելով ազատ մամուլի, քաղաքական ազատությունների և բազմակարծության համար: Հայաստանում գործում էին Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Հնչակյան, Հայ Ժողովրդական կուսակցությունները, սոցիալ-դեմոկրատների և սոցիալ-հեղափոխականների կազմակերպությունները:

Դաշնակցությունը, լինելով հայության շրջանում ամենաազդեցիկ քաղաքական ուժը և ամենամեծ ներդրումն ունենալով պետության վերականգնման գործում, սկզբից ևեթ ստանձնեց հանրապետությունը ղեկավարելու պարտականությունը՝ երբեմն կոալիցիայի մեջ մտնելով այլ քաղաքական ուժերի հետ: 1919թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կայացավ դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովը, որտեղ գլխավոր նպատակ հռչակվեց ազատ, անկախ և միացյալ Հայաստանի ստեղծումը:

Քաղաքական կուսակցություններից և կազմակերպություններից բացի հանրապետությունում գործում էին նաև զանազան հասարակական կազմակերպություններ: Դրանցից ամենազանգվածայինը Դաշնակցության ազդեցության տակ գտնվող և

[5]Վրացյան Ս., նշված աշխատություն, էջ 372-376:

աշխատողների շահերը պաշտպանող արհեստակցական միություններն էին: Հանրապետությունում գործում էին շուրջ 20 հայրենակցական միություններ, կանանց, ուսուցչական, ուսանողական և այլ միություններ, հրատարակչական ընկերություններ և այլն:

1920թ. փետրվարին հիմնվեց Հայաստանի Կարմիր խաչը, որն իր մասնաճյուղերը ստեղծեց հանրապետության մի շարք շրջաններում:

Երևանում տարբեր պարբերականությամբ լույս էին տեսնում մեծամասամբ որոշ կուսակցություններ կամ հասարակական կազմակերպություններ ներկայացնող մի շարք լրագրեր: Նման թերթերից էին՝ «Աշխատանք», «Հառաջ» (ՀՀԴ), «Ժողովուրդ» (Հայ ժողովրդական կուսակցություն), «Հայաստանի ձայն» (ռամկավարներ) և այլն: Սրանք կարևոր դեր էին խաղում անկախ պետության գաղափարի ամրապնդման, հայերենի՝ որպես պետական լեզվի ամրապնդման գործում[6]:

Թուրք-թաթարական խռովությունները: 1919թ. Հայաստանի Հանրապետության ներքին կյանքի ամենասուր հիմնհարցերից մեկը մահմեդական հակապետական շարժումներն էին, որոնք կազմակերպվում էին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից:

Թուրքերի պարտությունից և Անդրկովկասից հեռանալուց հետո թուրքական կառավարությունը Հայաստանում և Վրաստանում կազմակերպեց տեղական «անկախ հանրապետություններ»՝ իրենց կառավարություններով:

Մահմեդական խռովությունն սկսվեց Բորուք-Վեդի գյուղից, որտեղ հարևան գյուղերի հետ միասին կային 4000 կռվողներ: Հուլիսի 1-ին Դավալուի մոտերքում մահմեդականներն սպանեցին 9 հայ զինվորների և 12 գյուղացիների:

Միաժամանակ գլուխ բարձրացրեցին Շարուրի և Նախիջևանի մահմեդականները: Հուլիսի կեսերին մոտ 300 ասկյարներով Շահթախթ հասավ թուրքական բանակի գնդապետ Խալիլ բեյը և անցավ մահմեդական շարժման գլուխը:

ՀՀ կառավարությունն արտակարգ միջոցառումներ ձեռնարկեց. հայտարարեց զորահավաք, պետական դավաճանության և դասալքության համար մտցվեց մահապատիժ:

Օգոստոսի 10-ին հայկական զորքերը հարձակման դիմեցին Բեյուք-Վեդիի վրա և երեկոյան գրավեցին շրջակա մի քանի գյուղեր: Հայկական զորքերին հաջողվեց ամրանալ Բեյուք-Վեդիի առջև փորված դիրքերում:

---

[6] Հայոց պատմություն, էջ 545-548:

Օգոստոսի 23-ին թուրքերը սկսեցին աշխուժանալ Էջմիածնի շրջանում: Ամբողջ Զանգիբասարը հրաժարվեց ճանաչել ՀՀ իշխանությունը:

Կռիվների թատերաբեմ դարձավ նաև Կարսի նահանգը: Օգոստոսի 18-ին 18 հազար թուրք-քրդական ուժեր հարձակվեցին Կաղզվաի վրա, բայց ետ մղվեցին: Օգոստոսի 22-ին 400 թուրքեր փորձեցին կտրել Սարիղամիշի երկաթուղին, սակայն օգոստոսի 30-ին հայկական ուժերև հարձակման անցան և նրանց ետ շպրտեցին: Կարսի շրջանում հայկական զորամասերի հաջող գործողությունների շնորհիվ մահմեդական շարժումը ճնշվեց:

ՀՀ ներքին կյանքի ամենասուր հարցերից մեկը թրքաբնակ վայրերի գրավումն էր: Հայկական զորքերին հաջեղվեց մեկը Մյուսի հետևից գրավել մի շարք տարածքներ:

1920թ. ամռանը ՀՀ սահմանները տարածվեցին Ղարաբաղից մինչև Օլթիի ածխահանքերը:

Մայիսյան ապստամբությունը: ՌԿ(բ)Կ Կենտկոմի ու Կովկասյան կոմիտեի ղեկավարությամբ և օգնությամբ 1919 թվականի ամռանը կազմակերպորեն ամրապնդվեցին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, որոնց միավորման գործում մեծ դեր խաղացին նրանց 1919թ. սեպտեմբերյան խորհրդակցությունը և 1920թ. հունվարյան կոնֆերանսը: Ընտրվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները միավորող օրգան՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ), որի կազմում ընդգրկվեցին Ս. Ալավերդյանը, Սարգիս Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Շահվերդյանը, Հ. Կոստանյանը, Ղուկաս Ղուկասյանը, Ա. Նուրիջանյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Գոգունցը, Ա. Մելքոնյանը, Ս. Մարտիկյանը և ուրիշներ:

Աշխուժացավ կուսակցական կազմակերպությունների գործունեությունը: Դրանց աշխատանքները ղեկավարում էին Բ. Ղարիբջանյանը, Ս. Ալավերդյանը, Ղուկաս Ղուկասյանը, Հ. Սարուխանյանը, Բ. Բատիկյանը, Ե. Մկրտումյանը, Հ. Կամարին, Բ. Հարությունյանը և ուրիշներ: Հատկապես զգալի էր Ալեքսանդրապոլի բոլշևիկյան ընդհատակյա կոմիտեի աշխատանքը (ղեկավար՝ Բ. Ղարիբջանյան): Կոմիտեն կենդանի կապ էր հաստատել Շիրակի ավազանի Քյավթառլու, Ղուլիջան, Փոքր Պարնի, Նորաշեն և այլ գյուղերի կոմբջիջների հետ: Երիտասարդության շրջանում մեծ աշխատանք էր ծավալել 1919թ. գարնանը ստեղծված Կոմունիստական երիտասարդական «Սպարտակ» միությունը (ղեկավարներ՝ Ղուկաս Ղուկասյան, Ա. Բուդաղյան, Աղասի Խանջյան):

1920թ. հունվարին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդաժողովը որոշեց արտաքին ու ներքին նպաստավոր պայմանների դեպքում ապստամբել և գրավել իշխանությունը: Նրանք այդպիսի նպաստավոր իրադարձություն համարեցին 1920 թ.ապրիլի վերջին Ադրբեջանի խորհրդայնացումը՝ Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի կողմից: Ապստամբությունը ղեկավարելու համար ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (ՀՌՀԿ):

1920 թվականի մայիսմեկյան ցույցերն ու միտինգները, որոնց կազմակերպիչն ու ղեկավարը ՌԿ(բ)Կ Արմենկոմն էր, առաջին գործնական քայլերն էին: Ապստամբների կողմն անցան հեղափոխական գաղափարներով տարված զինվորականության մի մասը և «Վարդան զորավար» զրահագնացքը: Վերջինիս հրամանատար կապիտան Սարգիս Մուսայելյանը նշանակվեց ապստամբական ուժերի ղեկավար:

Մայիսի 10-ին ՀՌՀԿ-ն Ալեքսանդրապոլում իշխանությունը վերցրեց իր ձեռքը, սակայն անվճռական գտնվեց, և մի քանի օր անց կառավարական ուժերը Սեպուհի (Արշակ Ներսիսյան) հրամանատարությամբ ստիպեցին ապստամբներին անձնատուր լինել:

Ապստամբական թույլ բռնկումներ եղան նաև Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Ղազախ-Շամշադինում և այլուր: Այդ ելույթները նույնպես հեշտությամբ ճնշվեցին:

Մայիսյան ապստամբությունը ճնշվեց հիմնականում Հայոց բանակի կողմից: Ապստամբության պարտության հիմնական պատճառը հանդիսանում էր նրանում, որ ապստամբության ելած բոլշևիկները բավարար աջակցություն չստացան Հայաստանի ժողովրդի կողմից: Բոլշևիկ ղեկավարները հույս էին դրել դրսի՝ հիմնականում Կարմիր բանակի օժանդակության վրա, այն ինչը տեղի չունեցավ: Իսկ այլ պատճառներից կարելի է թվարկել ապստամբության անկազմակերպ լինելը, որն անջատ ընթացք ունեցավ, առանց միասնական ղեկավարության:

Այս դեպքերը Հայաստանի իշխանությունների մոտ լուրջ անհանգստություն առաջացրին: Պետության համար ստեղծվեց վտանգավոր դրություն: Քաղաքական ճգնաժամը հաղթահարելու համար որոշվեց ստեղծել ուժեղ ձեռքի կառավարություն: Մայիսի 5-ին հրաժարական տվեց Ալեքսանդր Խատիսյանի կառավարությունը, և նրա փոխարեն կազմվեց այսպես կոչված Բյուրո-կառավարություն՝ Դաշնակցության ղեկավար մարմնի անդամներից: Վարչապետ նշանակվեց Համազասպ Օհանջանյանը: Նորաստեղծ կառավարությունը ձեռնարկեց մի շարք արտակարգ միջոցառումներ:

Արգելվեցին գործադուլները և ցույցերը: Հիմնվեցին արտակարգ դատարաններ, սահմանվեց մահապատիժ և այլն:

Ապստամբության տասնյակ մասնակից ակտիվիստներ բանտարկվեցին: Կասեցվեց Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության գործունեությունը: Բոլշևիկների մի մասն անցավ ընդհատակ, իսկ մյուս մասը հեռացավ Ադրբեջան, որպեսզի այնտեղից նախապատրաստեր իշխանությունը գրավելու նոր գործողություններ: Գնդակահարվեցին ապստամբության ղեկավարներ Ստեփան Ալավերդյանը, Սարգիս Մուսայելյանը, Բագրատ Ղարիբջանյանը, Հովհաննես Սարուխանյանը, Եգոր Սևյանը, Ք. Մկրտչյանը, Ե. Մկրտումյանը, Բ. Բատիկյանը, Բ. Հարությունյանը և ուրիշներ:

Ապստամբության հետևանքները Հայաստանի Հանրապետության համար ծանր էին: Երկրի ներքին դրությունը վատացավ:

1. Մայիսյան իրադարձությունների հետևանքով էլ ավելի սրվեց Հայաստանի Հանրապետության պարենային վիճակը: Բոլշևիկյան ապստամբության հետևանքով միջազգային պարենային հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացված 42 հազար տոննա ալյուրը այդպես էլ չմտավ Բաթումի նավահանգիստ:
2. Հայաստանի Հանրապետության բազմաթիվ շրջաններում անդառնալի վնաս հասցվեց ցանքատարածություններին, և այդ տարվա հացահատկի բերքը անբավարար եղավ, չնայած լավ բերք էր սպասվում:
3. Մայիսյան իրադարջությունները որոշակի առումով բարոյալքեցին ժողովրդին և բանակը, այն էլ՝ 1920թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակին՝ առաջ բերելով <<ճշմարտանման>> և անպատեհ հույսեր և դառը հիասթափություն: Հայկական բանակի մարտունակությունը և բարոյական ոգին խիստ անկում էր ապրել՝ քաղաքացիական կռվին մասնակցություն ցուցաբերելով[7]:

[7] Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., Երևան, 2011, էջ 125-126:

Եզրակացություն

Առաջին Հանրապետության փորձը, ձեռքբերումները և ձախողումները մեզ դասեր են տալիս: Առաջին հանրապետության օրինակով ցանկանում էի սովորողներին ցույց տալ, որ ցանկացած դժվարություն պետք է հաղթահարել սեփական ուժերով՝ ազգովի մեկ-միասնություն դառնալով, չսպասելով օգնություն դրսից: Չնայած բոլոր բժվարություններին՝ մեզ համար պետք է գերադասելի լինի ազգային պետականությունն օտարի տիրապետությունից:Թեմայի ուսումնասիրման արդյունքում սովորողները պետք է գիտակցեն, որ պետք է հենվել սեփական ուժերի վրա:

Կարծում եմ՝ թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները կհանգեն այն եզրակացության, որ պետականության վերականգնումը կարևոր դեր խաղաց հայ ժողովրդի կյանքում, և հենց առաջին հանրապետությունը հիմք հանդիսացավ երկրորդ և երրորդ հանրապետությունների ստեղծման համար: Կգնահատեն այն փաստը, որ առաջին հանրապետության կառավարությունը դժվարին պայմաններում կարևորում էր կրթության և մշակույթի զարգացումը:

Մայիսյան ապստամբության օրինակով սովորողները կգիտակցել, որ երկրի ներսում իշխանության համար մղվող պայքարը կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ:

Թեմայի դասավանդման մեթոդիկա

Թեմայի դասավանդման տեսանկյունից կարևոր եմ համարում աշակերտներին ոչ միայն տեսական գիտելիքներ հաղորդել պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ, այլ նպաստել նրանց արժևորելու, քննադատելու, եզրահանգումներ անելու և համեմատելու կարողությունների զարգացմանը:

Աշակերտները պետք է կարողանան.

- գնահատել և կարևորել պետականության վերականգնման պատմական նշանակությունը,
- գտնել երկրի ներսում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների պատճառներն ու դրանց հետևանքները,
- իրենց վերաբերմունքն արտահայտելՄայիսյան ապստամբության և դրա հետևանքների մասին,
- քննադատել առաջին հանրապետության կառավարության վարած քաղաքականությունը՝ ցույց տալով դրական կողմերն ու բացթողումները,
- զուգահեռներ անցկացնել տվյալ ժամանակաշրջանում և մեր օրերում տեղի ունեցող իրադարձությունների միջև:

Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը ուսումնասիրելիս կարծում եմ՝ կարելի է կիրառել <<Աշխատանք սկզբնաղբուրով>> մեթոդը: Սովորողներին հանձնարարվում է ընթերցել դասի վերջում առկա լրացուցիչ նյութը (Հայոց պատմություն, 9-րդ դասարան, Մանմար, 2019, էջ 21), ապա պատասխանել հարցին. <<Ձեր կարծիքով որո՞նք էին հանրապետությունում տիրող նման ծանր իրավիճակի պատճատները>>: Սրա շնորհիվ աշակերտներն ինքնուրույն կներկայացնեն Հայաստանի առաջին հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր դրության պատճառները:

<<Տնտեսության վերականգնմանը և զարգացմանը ուղղված միջոցառումները>> ենթավերնագրի ուսումնասիրությունից հետո նպատակահարմար եմ համարում Տ-աձև աղյուսակի լրացումը: Աղյուսակի միջոցով սովորողները կներկայցնեն տնտեսության վերականգնման ուղղությամբ իրականացված միջոցառումների դրական և բացասական կողմերը:

<<1920 թ. Մայիսյան ապստամբությունը>> թեմայի յուրացումը ստուգելու համար աշակերտներին հանձնարարում եմ լրացնել այսպիսի հուշաթերթիկ՝

Մայիսյան ապստամբության ուսումնասիրում

1. Ի՞նչը առիթ ծառայեց ապստամբության համար:
2. Ինչպե՞ս սկսվեց ապստամբությունը:
3. Ովքե՞ր էին ապստամբության կազմակերպիչները:
4. Ո՞րն էր ապստամբների նպատակը:
5. Ի՞նչ քայլեր նրանք ձեռնարկեցին:
6. Ինչպե՞ս ճնշվեց ապստամբությունը:
7. Որո՞նք էին պարտության պատճառները:
8. Ի՞նչ հետևանքներ ունեցավ ապստամբությունը:

Թեմայի ուսումնաիրությունից հետո նախատեսված <<Գործնական աշխատանքը>> կարելի է անցկացնել որպես համագործակցային դաս: Դասարանը նախապես կբաժանեմ 4 խմբի, որոնք կստանան տարբեր առաջադրանքներ.

1-ին խումբ- Սոցիալ-տնտեսական դրությունը

2-րդ խումբ- Կրթամշակութային կյանքը

3-րդ խումբ- Քաղաքական կյանքը, կուսակցությունները

4-րդ խումն- Երկրի կայունությանը սպատնացուղ վտանգներ:

Դասին սովորողները ներկայացնում են իրենց պատրաստած պաստառը կամ սահիկաշարը: Ապա կազմակերպվում է քննարկում նախօրոք մշակված հարցերի շուրջ:

Գրականության ցանկ

1.Հայոց պատմություն, բուհական դասագիրք, Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ, Երևան, 2012

2.Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Առաջին տարիներ, Երևան, 2005

3.Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000

http://www.historyofarmenia-am.armin.am/images/menus/1439/HH_qax_patm_Pastaatuxt.pdf

4. Վրացյան Ս.,Հայաստանի հանրապետության, Երևան,1993

http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2020/05/HH_Simon-Vracyan.pdf

5. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2011

http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/Hayastani_hanrapetutyun_18-20.pdf